

ԲԱՆԱԿՈՒՄ ԾԱՌԱՅԵԼՈՒ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ և
ԿԻՐԱՌԱԿԱՆ ԽՆԴԻՐ*

Արմեն Դոլուխանյան, Անդրեյ Սարումյան

Բանակի բառեղ՝ դպրոց, բանակ, ռազմահայրենասիրություն, դաստիարակություն, գորակոչային, կիրառական, երիտասարդություն, անկախություն:

Արցակի զարգացման պատմության ամբողջ ընթացքում քաղաքացիների ֆիզիկական և ռազմական դաստիարակության նկատմամբ հոգաւորությունը գրավել է առաջատար տեղ: Այն հասուն նշանակություն է ստացել սովորական հասարակության շրջանում, երբ ֆիզիկական դաստիարակությունը ստացել է նպատակադրությամբ [1]: Ռազմաֆիզիկական դաստիարակության գերիշխող պատճառը պետք է տեսնել նրանում, որ հին ժամանակներից մինչև մեր օրերը շատերն են ծգուում նվաճել Հայաստանը և հաճախ են նվաճելու: Բայց հայ ժողովուրդը կանգուն է մնացել: Եվ այդ պատճառով բոլորովին պատահական չէ, որ և այսօր ուշադրություն պետք է դարձնել ռազմաֆիզիկական դաստիարակությանը:

Անկախության հօչակումից հետո Հայաստանը հետևողականորեն վարում է մոտակա արտասահմանյան երկրների հետ խաղաղ գոյակցության պահովման, հնարավոր պատերազմները կանխելու և ազգային բանակն ամրապնդելու քաղաքականություն: Հայաստանի շուրջ ստեղծված ռազմաքաղաքական իրադրությունը ծևավորվում է սորատեզիական և աշխարհաքաղաքական բարդ միջավայրում, որոնք աչքի են ընկույն ներագեցության այնպիսի գործոններով, որոնք կարեի է գնահատել որպես «տաք» և անկանխատեսելի: Այդ պայմաններում ազգային բանակի մարտունակությունը ունի որոշիչ նշանակություն:

Հայկական բանակը ծնվել է 1990-1992 թթ. կամավորական շարժման պատմական հաղթանակների թիկունքում, ազգային զարթոնքի կազմավորման ալիքների վրա: 1995-1996 թթ.-ը եղել են բանակի կառուցվածքի ծևավորման և ամրապնդման վերջնական տարիներ: Դրանից հետո նվաճված անկայուն խաղաղության պայմաններում, ըստ Վ.-Սարգսյանի 1998 վկայության, հայկական բանակի կառուցման ներկա փուլը բնութագրվում է զարգացման հիմնավոր ավարտով և մարտական պատրաստության, կարգապահության, սոցիալական պաշտպանվածության դրական զարգացման սկզբով:

Ամոր սերնդի զաղակարական դաստիարակության կողմերից մեկը համոխանում է ռազմահայրենասիրական դաստիարակությունը: Այդ դաստիարակության կարևորությունը ներկա փուլում պայմանավորված է ազբեսիայի և սպառնելիքների ուժեղացմամբ և երկրի պաշտպանունակության հետագա ամրապնդման անհրաժեշտությամբ, ազգային բանակի մարտական պատրաստության բարձրացմամբ:

Բանակի մարտունակության բարձրացման անհրաժեշտ պայմանը բարոյաքաղաքական և ռազմատեխնիկական պատրաստությունն է, ինչպես նաև անձնակազմի ֆիզիկական պատրաստությունը այն պահանջների համապատասխան, որն այսօր ներկայացնում է ժամանակակից մարտը զինվորականների շարժողական ընդունակությունների զարգացման մակարդակի նկատմամբ:

* Հոդվածն ընդունվել է 15.01.2016:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ ֆիզ.դաստիարակության ամբիոնը:

ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՏ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

Դրա հետ կապված՝ ամում է ֆիզիկական պատրաստության և ռազմակիրառական կարողությունների և հմտությունների նշանակությունը՝ որպես բանակ գորակոչվող երիտասարդության ֆիզիկական դաստիարակության պրակտիկ խնդիրներից մեկը [2]:

Ռազմահայրենասիրությունը երիտասարդների գաղափարական մակարդակի բարձրացման անհրաժեշտ միջոցներից է: Հայրենասիրություն սերմանելն ամենաբարդ խնդիրներից է, որի արդյունքը միանգամից չի երևում: Դա ամենօրյա հետևողական աշխատանք է: Ապագա հայ գինվորը պետք է գիտակցի, որ իր երկիրը երբեք անարդար պատերազմներ չի վարել, որ իր պարտքն է հայրենիքը պաշտպանել թշնամիներից ու կրվել պատմական անարդարության դեմ:

Ռազմահայրենասիրական դաստիարակության էությունն այն է, որ բարձրացվի բոլոր տեսակի ուսումնական հաստատությունների դերը բանակի համար ռազմական պահանջմանը նպատակով:

Ռազմահայրենասիրական դաստիարակության առաջին քայլերն անհրաժեշտ է սկսել դեռևս նախադպրոցական տարիներին, իսկ առավել կայուն գիտելիքներ պետք է տան դպրոցը և բուհը: Ծատ կարևոր է դպրոցներում նպաստել ապագա գինվորների գաղափարական պատրաստությանը: Ռազմահայրենասիրությունը աշակերտների գաղափարական մակարդակի բարձրացման անհրաժեշտ միջոցներից է:

«Հապատականության նախարար Սեյրան Օհանյանն ընդգծել է «Հավատացած եմ, որ բոլոր նդիրները կրուծվեն, եթե մենք կարողանանք նոր սերնդի մեջ իսկական հային բնորոշ հանդուրժողականություն, գիշղականություն, բարություն քարոզել հասկացես հայրենակցի՝ հայ մարդու նկատմամբ և այս աշխատանքների հիմքում դնել հայրենասիրությունը» [3]:

Դպրոցներում առաջնային խնդիրներից են՝ ապագա գինվորներին հայրենիքի նկատմամբ անմնացորդ նվիրվածություն, ՀՀ գինված ուժերում ծառայելու նկատմամբ լարվածության և վախի հաղթահարման, ֆիզիկական և հոգեբանական պատրաստվածության նպաստելը, ռազմական մասնագիտությունների հանդեպ: Հայ գինվորն այսօր արդեն լավ է հասկանում, որ միայն որակյալ ուսուցմամբ կարող է հակառակորդի նկատմամբ պահպանել գերազանցությունը: Զենքը ու ռազմական տեխնիկա ունենալը դեռ քիչ է: Պետք է ունենալ նաև դրանք շահագործող բարձրակարգ մասնագետներ, և հենց այս գիտակցությամբ կ հայ գիմնառայողները պետք է սովորեն ու կատարելագործեն իրենց գիտելիքները:

Կյանքի կարևորագույն դերն ունի գինդեկը, նա պետք է գիտակցի գործի կարևորությունը, լինի իրական հայրենասիրության ջատագովը, կարողանա հմուտ ու արդյունավեր կազմակերպել ռազմահայրենասիրական աշխատանքները: Զինդեկի արտադպրոցական և արտադարձանային աշխատանքները ապագա գինվորներին հայրենիքի պաշտպանությանը պատրաստելու անհրաժեշտ և անքակտելի մասն են: Հայրենասիրական աշխատանքը ներառում է հիմնականում ռազմահայրենասիրական թեմաներով միջոցառումներ, հանդիպումներ մարտական գործողությունների մասնակիցների հետ և այլն: Կրոյունավետ են նաև սպորտային միջոցառումները, մրցակցային խաղերը:

Հայրենասիրության դասերը աշակերտի անձի հիմքահաստատման, կայացման, բարոյական արժեքների ծևավորման, ռազմական գաղափարադաստիարակչական մտածելակերպի բարձրացման և հետազոտություն գինված ուժերում ծառայելու նախապայման են հանդիսանում [4]:

Ինչպես, օրինակ, հ. 11 ավագ դպրոցում պարբերաբար իրականացնում են հանդիպումներ Հայրենական մեծ պատերազմի, Արցախյան ազատամարտի, իմազես նաև մերորյա հերոսների հետ: Դպրոցում անց են կացվում ռազմականացված կրոսավագք,

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

գենքի քանդում հավաքում, հրաձգություն, «Արծվիկ» ռազմամարզական խաղեր: Դպրոցը նաև ակտիվ համագործակցում է շեֆություն ստանձնաժ գորամասի հետ: Բոլոր սովորական և հիշարժան օրերին կազմակերպվում են այցելություններ Իվանյանի անվան ռազմամարզական վարժարան, շեֆ գորամաս, ինչպես նաև առաջնազիծ:

Դպրոցում իրականացվում է աշակերտ-գինվոր նամակագրություն: Աշակերտուների ռազմահայրենասիրական դաստիարակությամբ մեծապես նպաստում է նաև ամռանը կազմակերպվող «Ասպետ» ռազմամարզական ճամբարը, որտեղից դպրոցի աշակերտները վերադառնում են շնորհակալական նամակներով: Այդ ամենը մեծապես նպաստում է աշակերտների ֆիզիկական, բարոյահոգեբանական և ռազմահայրենասիրության դաստիարակության ձիշուն կազմակերպմանը:

Մեր երկրում երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակությունը վերածվում է պետական – քաղաքական կարևորության մեջ խնդրի և չի կարող հանգեցնել աշակերտներին ռազմական և գաղափարական միայն նեղ շրջանակի գիտելիքներ հաղորդելու: Այն պետք է սերտորեն գուգակցվի գորակոչային հասակի երիտասարդության ֆիզիկական նախապատրաստության հարցերի հետ: Այս դրույթները ապացուցված են մի շարք հետազոտողների աշխատանքներում:

Մասնագիտական գրականությունում գոյություն ունի հասկացություն այսպես կոչված ռազմական դաստիարակության մասին, ուր համալիր դաստիարակության հիմնական ուղղությունները միահյուսվում են և ձեռք են բերում որոշակի յուրահատկություններ:

Ռազմական դաստիարակության առաջատար կողմը ֆիզիկական դաստիարակությունն է, այլ կերպ՝ ֆիզիկական պատրաստությունը այրոֆեսիոնալ կողմնորոշմամբ՝ տարրեր այրոֆիլի ռազմական մասնագետներ տանկիստներ, օդաչուներ, հրետանավորներ, դեսանտայիններ և այլք, նախապատրաստելու համար: Ֆիզիկական պատրաստությունը նաև հանդես է զայխու որպես մասնագիտական պատրաստության ծև և սերտ կապված է բարոյակամային, հոգեբանական, գաղափարաքաղաքական պատրաստության հետ: Այլ կերպ ասած՝ ֆիզիկական պատրաստությունը՝ ֆիզիկական դաստիարակության ծև է, որն ունի անմիջական կիրառական ուղղվածություն: Օրինակ՝ աշտարակային վերամբարձ, կրունկի մեքենավարի, գործակարգավորի, հրշեցի, մարտիկի; մարգիկի ֆիզիկական պատրաստությունը:

Այդ պատճառով, ամերաժեշտ է ընդգծել, որ ռազմական դաստիարակությունը դաստիարակության կարևոր բաղկացուցիչն է, որը պայմանավորված է մեր հայրենիքի՝ ԼՂՀ անկախության պաշտպանության պահանջներով: Դրա գիշավոր նպատակն այն է, որ մինչև բանակ գորակոչվելու գինվոր – հայրենասերներից նախապատրաստել ծառայության համար ոչ միայն ծնաբանական և մարմնական բավականաչափ հատկանիշներ, այլև ֆիզիկական պատրաստության բարձր մակարդակ ունեցող գորակոչիկներ: Նրանք պետք է տիրապետեն բարձր զարգացման շարժողական ընդունակությունների՝ ճարպ-կության, ուժի, դիմացկունության, կորորդինացիայի և այլն վագելու, ցատկելու, նետելու, լողալու, կրակելու, տեղանքում կողմնորոշվելու, իսկ այսօր նաև տիրապետեն համակարգչին, կարողանան վարել տեղաշարժման տեխնիկական միջոցները: Այդ մասին են վկայում և՝ հասարակության զարգացման սոցիալիստական շրջանի աղյուրները, և՝ ՀՀ Հայաստանի ռազմաֆիզիկական պատրաստության մասին եղած տեղեկությունները [6]:

Մի շարք արտասահմանյան երկրներում արտակարգ մեծ ուշադրություն են հատկացնում գորակոչիկների բանակում ծառայելու և անմիջականորեն գինվորների պատրաստությանը: Օրինակ՝ ԱՄՆ-ի հասուկ ստորաբաժանման մեջ ընդունվելու համար անհրաժեշտ է վագել 12 կմ կտրտված տեղանքում, հաղթահարել ջրային արգելք, ապա մագլցելով անցնել երեք մետր բարձրություն ունեցող պատի վրայից, ճեղքել անցնել:

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

Վառվող տան միջից կրակելով թիրախի վրա, խփել վնասելով, և չորս միհյանց փոխարինող հրահանգիչների հետ անցկացնել 12 րոպեանոց մաքուր մարտ՝ առանց կանոնադրության:

Այսօր զինվորների ֆիզիկական պատրաստության նկատմամբ եղած պահանջները նկատելիորեն աճել են, որի մասին են վկայում այսպիսի օրինակներ. հրանոթի անձնակազմի աշխատունակությունը ապահովելու համար ամերաժեշտ է, որ յուրաքանչյուր հրետանավոր կարողանա զգվել 10-12 անգամ, բարձրացնի կրծքին 80-85 կգ քաշով ժամանակողը, 400 մ-ը վազի 65-70 վարկյան:

Երիտասարդության բազմակողմանի համայիր դաստիարակության հիմնական կարևոր կողմից մեկն էլ ֆիզիկական դաստիարակությունն է [7]: Այն ծեռքը է բերում հատուկ նշանակություն մարդու պրոֆեսիոնալ գործունեության մեջ, որն ընդունված է անվանել պրոֆեսիոնալ - կիրառական ֆիզիկական պատրաստություն [8]: Պրոֆեսիոնալ - կիրառական ֆիզիկական պատրաստության կարևոր ուղղությունն է ռազմակիրառական ֆիզիկական պատրաստությունը, որն ապահովում է գորակոշիկների և արդեն բանակում ժառանգությունը զինվորականների շարժողական պատրաստականությանը:

Զորակոշային հասակի երիտասարդության ռազմահայրենասիրական և ռազմաքիշիկական դաստիարակության շատ խնդիրներ կարող են հաջողությամբ լուծվել ֆիզիկական կուլտուրայի դասերի և արտադասարանային պարապմունքների ժամանակ: Դրան են նպատակառուղղված առարկայի անցյալ տարիների ուսումնական ծրագրերը: Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի կանոնավոր պարապմունքները օգնում են ուսուցիչներին և մարզիչներին բարձրացնել պարապունքների բարոյահոգեբանական, բաղադրական, և ֆիզիկական կոփակածությունը: Բարոյական և հոգեբանական կայունությունը, բարձր ֆիզիկական պատրաստությունը հանդիսանում են այնպիսի հզոր գենք ինչպես են ամենաահեղ ռազմական տեխնիկան [9]:

Սակայն զանգվածային փորձը վկայում է, որ դպրոցականների ֆիզիկական դաստիարակության գործում դեռևս գոյություն ունեն բացթողումներ: Ուազմական կենցաղի, ուսման, մարտական խնդիրների կատարման պայմաններում նախկին դպրոցականներից պահանջվում էին այնպիսի ֆիզիկական, կողորդինացիոն և կամային ձիգեր, որոնց համար նրանք հաճախ պատրաստ չէին: Դա երիտասարդ մարզիկների որոշ մասի մոտ առաջ է բերում անվճռականություն, վախի զգացում և այլ բացասական երևոյթներ [10]: Մյուս կողմից՝ պրակտիկական ցույց է տալիս, որ լավ արդյունքներ են տալիս ռազմահայրենասիրական դաստիարակության այնպիսի ծները, որոնք թույլատրում են գուգակցել ուսումնական և արտառուսունական աշխատանքները և նպատակառուղղված են զանազան միջոցների և մեթոդների համայիր կիրառմանը: Ուազմահայրենասիրական դաստիարակության մեջ շատ մեծ է նաև սկզբնական ռազմական պատրաստության դասերի դերը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Աթոյան Կ.Պ., Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հնագույն ակունքները Հայաստանում տիտող, Եր., 1985, էջ 92:
2. Ղազարյան Ֆ.Գ., Շարժողական հատկությունների մշակման մեթոդիկան: Մեթոդ հանձնարարականներ, Եր., 1974, էջ 3:
3. Օհանյան Ս.Ս., Բանակը մեր սուլուն է, մեր ամրոցը, Եր., 2014, էջ 21:
4. Ուազմական հոգեբանության հիմնախնդիրները / Հանրապետական գիտաժողով/ Եր., 2013, էջ 259:

ՄԵԽՐՈԴ ՄԱՀԾՆԵՑ ՀԱՍԱՏԱՐԱՆԻ ԻՐԱՎՈՒ 2016

5. Коммунистическое воспитание. Словарь. Под ред. Л.Н. Пономарева и Ж.Т. Тощенко. М., 1984, стр. 28:
6. Արոյան Կ.Պ., նշվ. աշխ., էջ 85:
7. Ղազարյան Ֆ.Գ., Գրիգորյան Ա.Ա., Ֆիզիկական դաստիարակության տեսություն, Եր., 1997, էջ 63:
8. Ղազարյան Ֆ.Գ., Մարդու ֆիզիկական կատարելությունը, Եր., 1987, էջ 20:
9. Նույն տեղում, էջ 140:
10. Конжиев Н.М., Система военно-патриотического воспитания в общеобразовательной школе, М., 1986, стр.125.

ԱՄՓՈՓԱԳԻՐ

**Բանակում ծառայելու պատրաստությունը որպես գաղափարական
և կիրառական խնդիր**
Արմեն Դոլուխանյան, Անդրեյ Սարումյան

Ուզմահայրենասիրական դաստիարակությունը գորակոչային հասակի դպրոցականների մոտ, որպես անկախ Արցախի պաշտպանությանը նախապատրաստելու սիստեմատիկ, ամենօրյա և պահապորպած ձևավորման գործընթաց, հենվում է ազգային զգացումների վրա, որոնք դաստիարակվում են մարտական այն ավանդույթներով, որ ունի հայ ժողովուրդի ռազմական պատմությունը: Այսեղից հետևում է, որ ռազմահայրենասիրական դաստիարակությունը երկմիանական դաստիարակության գործընթաց է՝ հայրենասիրության և Հայունիքի պաշտպանությանը նախապատրաստվելու համար:

РЕЗЮМЕ

Идеологическое и прикладное значение проблемы подготовки к службе в армии
Армен Долуханян, Андрей Сарумян

Ключевые слова: школа, армия, военный патриотизм, воспитание, призывной, прикладной, молодежь, независимость.

Военно-патриотическое воспитание школьников призывающего возраста для подготовки будущих защитников независимого Арцаха – систематический, ежедневный и планомерный процесс формирования личности, основанный на национальных чувствах, которые воспитываются на боевых традициях военной истории армянского народа. Отсюда следует, что построение военно-патриотического воспитания – это составной процесс развития патриотизма и подготовки к защите Родины.

SUMMARY

Readiness for military service as an ideological and practical problem
Armen Dolukhanyan, Andrey Sarumyan

Keywords: school, army, military patriotism, education, recruitment, practical, youth, independence.

Military-patriotic education of recruitment age schoolchildren, being daily and systematically planned formative process for the defence of independent Artsakh, is based on the national feelings which are raised in such martial traditions that military history of the Armenian people has.

It follows that patriotic education is an integrated process devoted to patriotism and the defence of the homeland.